

FOUNDING PARLIAMENT, MOVEMENT EXPLAINED

Posted on March 10, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



[Suzanne Simonyan](#), Yerevan, 5 March 2015

"No Violence on April 24" Says the Founding Parliament

Հայերէն պատճենը ընթերցել [այստեղ](#)

The editorial [Good Intentions, Misguided Decisions](#) published on Keghart.com compels us to make some clarifications related to the activities of the Founding Parliament (hereinafter FP) and the movement "Centennial without this Regime" (hereinafter Movement).

There is misleading information in the editorial. For example, it presents FP members, who have been Pre-Parliament (PP) members but not the FP. The next inaccuracy is related to the "Armenian Renaissance" Movement in the Diaspora. It has its chapters in 10 countries. Garegin Chugaszyan is not leading the group. He is the FP President. I would like to present here the differences between the Movement and the FP. The leader of the Movement, which aims at removing the regime, is the Artsakh War hero Jirayr Sefilian.

[Suzanne Simonyan](#), Yerevan, 5 March 2015

"No Violence on April 24" Says the Founding Parliament

Հայերէն պատճենը ընթերցել [այստեղ](#)

The editorial [Good Intentions, Misguided Decisions](#) published on Keghart.com compels us to make some clarifications related to the activities of the Founding Parliament (hereinafter FP) and the movement "Centennial without this Regime" (hereinafter Movement).

There is misleading information in the editorial. For example, it presents FP members, who have been Pre-Parliament (PP) members but not the FP. The next inaccuracy is related to the "Armenian Renaissance" Movement in the Diaspora. It has its chapters in 10 countries. Garegin Chugaszyan is not leading the group. He is the FP President. I would like to present here the differences between the Movement and the FP. The leader of the Movement, which aims at removing the regime, is the Artsakh War hero Jirayr Sefilian.

The Executive Board of the FP is the FP Secretariat. The FP is the governing body of the Movement. It claims to be a body expressing the will of the people. After the removal of the regime, the FP will accomplish the process of signing contracts between the citizens and the FP members, which will authorize the latter to become a full-fledged and legitimate representative body. Consequently, the

FP will take over the duty of the legislative body of the Republic of Armenia.

We are glad that the editorial agrees with Mr. Chugaszyan's statement that there is a change of status quo regarding Artsakh detrimental to the Republic of Armenia. However, the editorial expresses surprise why the participants of the motorcade had taken part in it along with their families, wives and children. Let me point out that before the incident, the leader of the Movement, Jirayr Sefilian, had announced that Artsakh is his home, and he was going there with his wife and children.

Moreover, in the last two or three years and at present, many of the PP or FP members, especially the leading group, participate in the awareness-raising campaign activities with their families, including the children. Our campaign motorcades have never been stopped. A police escort usually accompanies our peaceful marches. In that sense there could be no exception concerning the motorcade to Artsakh, especially when all the participants of the motorcade consider Artsakh an integral part of Armenia.

The motorcade was peaceful and we were not going to war. We were going to exercise our civil rights vested by the Constitution. Knowing the RA current regime and its Stepanakert branch, we were anticipating that they would take some shameful steps to impede our march. The worst thing we anticipated was that we could face an entry barrier and nothing more. Of course, it would be an outrageous violation of the right to freedom of speech and movement. Anyway, such a terrorist act against the participants of the peaceful motorcade by the powers was beyond our expectation.

The editorial mentions the Movement's two blunders, but it is not clear enough what the first blunder is. Is it the awareness-raising motorcade to Artsakh or going there with families and children? Concerning the families, I would rather remind FP Vice-president Varuzhan Avetisyan's response to such a question in another situation: "The leaders of the National liberation Movement not only sacrifice themselves putting their lives on the altar, but also everything they have, including their families and children." I could hardly find a better answer to the question than this one.

The editorial states: "Some of the FP members merrily reported that the attacks had roused interest among many Armenians. At what price?" I am sorry to say, but the rhetorical expression is a superficial approach. Yes, after the incident the public interest towards the Movement increased. However, the interest increased not because we were beaten there, but because the FP exposed a deep problem kept in criminal conspiracy by the regime, which plays its dirty games in secret. It is unbelievable that any Armenian individual of national mindset or a group may be against this disclosure.

We firmly believe that the Berdzor incident, despite its sad end, had an enormous political significance, and it changed the public discourse regarding the issue of Artsakh. Berdzor became a litmus test, which revealed that a 'Chinese Wall' is being erected between Armenia and Artsakh. Moreover, some invisible political realignments and transformations are taking place there. In

consequence to the above-mentioned and the recent political events, the FP became a factor in the political field.

As a member of the Movement I participated in the motorcade and witnessed the incident. I anticipated the editorial to give political and legal assessment to the terrorist act against the peaceful march in Berdzor. Alas, it presents the moral side of the issue only. However, there is nothing about its legal side. For example, how the rights of 150 citizens were violated in Berdzor, how innocent people, including women and children, were subjected to unprecedented violence, how their fundamental freedoms of speech and movement were violated, and, especially, how the bandit groups and militias in Berdzor reviled the pride of all Armenians--the RoA flag. In the editorial there was no condemnation of the violence.

Let me address the second alleged blunder of the FP, mentioned in the editorial. The author of the editorial is not aware of Sefilyan's speech at the press conference related to Berdzor. He stated that April 24 was chosen as a starting day, but the FP would not take any action undermining the day or the day's events on April 24. No actions of disobedience are possible on that day. The individuals or forces who want to harm the movement exploit the meaning of April 24. This is understandable. Sefilian or others in the group have never encouraged violence. Instead, they always stress that our actions will be non-violent, and we are going to implement our program in peaceful ways. However, if the regime commits violence against the citizens, then we will exercise the sacred right of self-defense, and the adequate response will never be late. The above-mentioned definitely complies with the Constitution.

We believe that the date of April 24, as the start of the National Liberation Struggle, has a great symbolic significance. The vast majority of the Movement participants are descendants of the victims of the Armenian Genocide. Therefore, we cannot be disrespectful towards the day. We will bow our heads showing respect for our deceased ancestors on April 24. However, we also believe that choosing April 24 symbolically and changing the day of lament into the day of triumph, national rebirth and revival, into a day to create and to live and not to die and mourn is very important. By that, we shall change the mentality of the Armenian people. Today, in 2015, we witness a white genocide. Armenia is bleeding, because the most valuable resource--its citizenry, is leaving the country. I would like the Diaspora to draw attention to this dramatic situation.

We are losing the independence of our homeland. We shall lose it entirely if we lose Artsakh. Armenia without Artsakh will not have a chance to survive as an independent state. What shall we do now? Shall we remain silent and watch how we are losing a part of our homeland? Shall we wait until independent Armenia is erased from the map of the world? If we do it, the year of 2115 will be another centennial of another white genocide. The Diaspora Armenians (not only the classic Diaspora, but also those who left Armenia in the last 25 years) have to understand that we have reached a crucial moment, and that their participation in the liberation of Armenia is necessary.

The Diaspora should either participate in the liberation of our homeland or get ready for its funeral.

Today, more than ever, the Diaspora faces a choice: it has either to find the strength and join the national liberation movement physically as the owner of this land, or get ready to lose it in the nearest future. Only an independent Armenia can guarantee the preservation of our national identity. If we lose Armenia, the national identity of the future generations living in the Diaspora will be preserved only in the memories of the meals cooked in their childhood by their *Medz Mamas*.

Suzanne Simonyan is a founding member of the "Rights and Support" Foundation, also a member of the "Centennial without this Regime" movement.

«Ոչ բռնությանը Ապրիլ 24-ին» Ասում է Հիմնադիր խորհրդարանը

[Սյուզան Սիմոնյան](#), Երևան, 5 Մարտ 2015

Keghart.com կայքում տպագրված [Good Intentions, Misguided Decisions](#) (Առողջ Նպատակներ, Ապակողմնորոշող Որոշումներ) հոդվածը կարդալով կցանկանայինք որոշ նկատառումներ արտահայտել, որոնք առնչվում են Հիմնադիր խորհրդարանի գործունեությանը և «100-ամյակը առանց ռեժիմի» շարժմանը:

Պետք է հենց սկզբից նշել, որ հարգարժան հոդվածագիրը այնքան էլ լավ տեղեկացված չէ Հիմնադիր խորհրդարանից, քանի որ նշում է անձանց անուններ, որոնք Հիմնադիր խորհրդարանի անդամ չեն, սակայն եղել են Նախախորհրդարանի անդամ: Բացի դրանից, նշենք, որ Վերածնունդ Հայաստան շարժումը գործում է ոչ թե 5 այլ 10 երկրներում, Գարեգին Չուգասյանը Հիմնադիր խորհրդարանի նախագահն է:

Պետք է տարբերակել «100-ամյակն առանց ռեժիմի» շարժումը և Հիմնադիր խորհրդարանը: Ռեժիմին հեռացնելու նպատակ ունեցող «100-ամյակը առանց ռեժիմի» շարժման առաջնորդը Արցախյան ազատամարտի հերոս Ժիրայր Սեֆիլյանն է, իսկ Գարեգին Չուգասյանը Հիմնադիր խորհրդարանի նախագահն է: Հիմնադիր խորհրդարանի գործադիր մարմինը նրա Քարտուղարությունն է: Հիմնադիր խորհրդարանը մինչ ռեժիմի հեռացումը Շարժման կառավարման մարմին է, ինչպես նաև հավակնում է դառնալ ժողովրդի կամքը ներկայացնող սակայն այսօրվա պետական կառավարման համակարգից դուրս գտնվող մարմին: Ռեժիմին հեռացնելուց հետո Հիմնադիր խորհրդարանը ավարտին կհասցնի քաղաքացիների կողմից իրեն լիազորող պայմանագրերի կնքման գործընթացը և կվերածվի լիարժեք ու լեգիտիմ ներկայացուցչական մարմնի, որը կստանձնի Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանության իրականացան պարտականությունը:

Ուրախ ենք, որ հեղինակը համաձայն է և արդարացի է համարում Գարեգին Չուգասյանի այն միտքը, որ Արցախի հարցում ստատուս քվոյի փոփոխություն է տեղի ունենում ի վնաս Հայաստանի հանրապետության: Սակայն, դրա հետ միասին հարգարժան հեղինակը զարմանք է հայտնում, թե

ինչու են Բերձորում հայտնվել երեխաներ: Այդ հարցին ի պատասխան ասեմ, որ ավտոերթից առաջ Շարժման առաջնորդ Ժիրայր Սեֆիլյանը գրել էր, որ Արցախն իր տունն է և ինքը այնտեղ է գնում իր կնոջ և երեխաների հետ:

Բացի դրանից, արդեն երկու- երեք տարի է Նախախորհրդարանի և այսօր էլ Հիմնադիր խորհրդարանի և «100ամյակն առանց ռեժիմի» շարժման մասնակիցներից շատերը և, հատկապես՝ առաջնորդող խումբը, մասնակցում են քարոզչական երթերին իրենց ընտանիքների անդամների հետ, այդ թվում՝ իրենց երեխաների: Եվ երբեք այդ երթերը որևէ մեկի կողմից չեն խոչնդոտվել, այլ հակառակը, երբեմն նաև ուղեկցվել են ոստիկանական էսկորտով և միշտ ունեցել են խաղաղ բնույթ: Եվ այդ առումով, բացառություն չէր կարող լինել երթը դեպի Արցախ, քանի որ երթի ցանկացած մասնակից Արցախը Հայաստանի անբաժանելի մասն է համարում:

Մենք չէինք գնում պատերազմի, այլ գնում էինք իրականացնելու մեր քաղաքացիական իրավունքը, որը մեզ վերապահված է Սահմանադրությամբ: Իհարկե, գործող ռեժիմի և նրա ստեփնակերտյան մասնաճյուղի կառավարման պայմաններում մենք կանխատեսում էինք, որ նրանք կարող են խայտառակ քայլերի դիմել խոչնդոտելու համար մեր երթը: Սակայն մեր տրամաբանության սահմաններում տեղավորվում էր միայն և միայն Արցախ մտնելու մուտքի արգելքը: Եվ ոչ ավելին:

Մեր կարծիքով, նման քայլը հենց կլիներ խայտառակ ոտնահարում խոսքի և տեղաշարժի իրավունքի: Սակայն, որ պետական ահաբեկչություն տեղի կունենար խաղաղ երթի նկատմամբ, որևէ մեկի մտքով երբեք չի անցել և չէր էլ կարող անցնել: Դիտարկվող հողվածը կարողալիս, ինձ համար այնքան էլ պարզ չդարձավ, թե որն էր Շարժման կամ Հիմնադիր խորհրդարանի թույլ տված առաջին սխալը: Արդյո՞ք՝ ընտանիքներով գնալը, թե՞ ընդհանրապես գնալը: Եթե ընտանիքներով գնալուն է վերաբերում խոսքը, ապա այստեղ մեկ պատասխան կարող է լինել՝ հիշելով Հիմնադիր խորհրդարանի փոխնախագահ Վարուժան Ավետիսյանի գրառումը ի պատասխան այդ հարցի մեկ այլ իրադրության մեջ. «Ազգային ազատագրական շարժման առաջնորդները զոհասեղանին են դնում ոչ միայն իրենց անձը, այլև այն ամենն, ինչ ունեն, ներառյալ՝ իրենց ընտանիքներն ու երեխաներին:» Սրանից լավ պատասխան թերևս դժվար թե կարողանայի տալ:

Իսկ եթե հարգարժան հեղինակը երկու սխալներից մեկը համարում է Արցախ գնալը, ապա ասեմ, որ իմ համոզմամբ, այդ երթը, չնայած տխուր վերջաբանին, հսկայական քաղաքական նշանակություն ունեցավ, փոխելով հանրային դիսկուրսը Արցախի հարցի վերաբերյալ: Բերձորի դեպքը դարձավ լակմուսի թուղթ, որը բացահայտեց, որ իսկապես Չինական պատ է շարվում Արցախի և Հայաստանի միջև և աներևույթ վերադասարկորումներ են տեղի ունենում: Եվ չեմ կարծում, որ որևէ ազգային մտածողության տեր հայ անհատ կամ հայ հանրություն, կարող է դեմ լինել այդ բացահայտմանը և չանհանգստանալ:

Ինչ վերաբերում է հեղինակի այն մտքին, որ ՀԽ-ի որոշ անդամներ ուրախացած փաստում են այսօր, որ շատերի հետաքրքրությունը իրենց նկատմամբ աճել է շնորհիվ Բերձորի, և նաև ինչեցվող «Այդ՞ գնով:» հռետորական հարցին, ապա ասեմ, որ սա մակերեսային մոտեցում է: Այո, հետաքրքրությունն ավելացել է շարժման նկատմամբ, սակայն ոչ նրա համար, որ երթը ծեծի է

ենթարկվել այնտեղ, այլ նրա համար, որ Բերձորի և վերջին շրջանում նաև քաղաքական դաշտում տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում, ՀԽ-ը քաղաքական պայքարի դաշտում դարձավ գործոն, բացահայտելով և հանրության առջև դնելով մի խնդիր, որը այսօրվա ռեժիմը փորձում է հանցագործ գաղտնիությամբ լուծել իրեն հատուկ մեթոդներով և հանրության թիկունքում:

Ես որպես շարժման մասնակից, ինչպես նաև վերոհիշյալ երթի մասնակից և բերձորյան իրադարձության վկա, ես կցանկանայի, որ հողվածը տար քաղաքական և իրավական գնահատականներ Բերձորում տեղի ունեցած ահաբեկչական գործողության վերաբերյալ: Մինչդեռ հողվածը քննության է դնում շարժման և ՀԽ-ի գործունեության ընդամենը բարոյական կողմը: Հատկապես կարևոր նշանակություն կունենար հարցի իրավական գնահատականը, օրինակ՝ թե ինչպես խախտվեցին 150 ՀՀ քաղաքացիների իրավունքները, ինչպես նրանք ենթարկվեցին անսահմանափակ բռնությունների իրենց մեքենաների մեջ նստած և որևէ օրենք խախտած չլինելու պարագայում, թե ինչպես ոտնահարվեց նրանց հիմնարար ազատությունները՝ խոսքի և տեղաշարժի և, ամենակարևորը, ինչպես անարգվեց այդ օրը համայն հայության պաշտամունք հանդիսացող ՀՀ դրոշը, որով այդքան հպարտանում են նաև սփյուռքի մեր հայրենակիցները:

Եվ չինչեց նաև որևէ դատապարտող խոսք երեխաներին և կանանց բռնության ենթարկելու փաստի վերաբերյալ:

Այժմ կանդիդատանս Հիմնադիր խորհրդարանի երկրորդ ենթադրյալ «սխալին»: Հարգելի հեղինակը հավանաբար ծանոթ չէ Բերձորից հետո Ժիրայր Սեֆիյանի ասուլիսի ժամանակ նրա ինչեցրած հայտարարությանը, որ Ապրիլի 24-ի օրը ընտրվել է որպես Շարժման սկիզբ, սակայն, այդ օրը տեղի չի ունենալու որևէ գործողություն, որը կխաթարի օրվա խորհուրդը կամ այդ օրվա միջոցառումները: Իհարկե, մեզ հարվածել ցանկացողները շահարկում են այդ օրվա խորհուրդը, և դա հասկանալի է: Այնուհանդերձ, եթե հարգելի հեղինակը ուսումնասիրի և՛ Սեֆիյանի և՛ Շարժման մյուս մասնակիցների հայտարարությունները, ապա անպայման կբացահայտի, որ երբեք և ոչ մի պարագայում բռնության կոչեր չեն հնչել, այլ ասվել է, որ մենք խաղաղ ձևով ենք իրականացնելու մեր ծրագիրը, սակայն, եթե ռեժիմը բռնություն կիրառի, ապա մենք իրացնելու ենք ինքնապաշտպանության սրբազան իրավունքը և բռնությանը համարժեք պատասխան ենք տալու: Սա միանշանակ կերպով գտնվում է տրամաբանության և Սահմանադրության սահմաններում:

Ինչ վերաբերում է օրվա ընտրությանը, ապա Ապրիլ 24-ին ազգային ազատագրական պայքարի մեկնարկը ունի մեծ խորհրդանշական իմաստ: Շարժման մասնակիցների ճնշող մեծամասնությունը Մեծ Եղեռնի զոհերի սերունդներ են: Ուստի մենք չենք կարող անհարգալից լինել այդ օրվա նկատմամբ: Մենք լի ենք հարգանքով և մեր գլուխն ենք խոնարհելու այդ օրը մեր զոհված նախնիների հիշատակի առջև: Այնուհանդերձ, մենք հավատում ենք նաև, որ այդ օրը ընտրելով խորհրդանշական իմաստով, մենք հայի հոգեբանության մեջ փոփոխություն ենք մտցնելու: Այն է՝ ողբի օրը դարձնել հաղթանակի, ազգային վերածննդի, վերածնվելու, արարելու և ապրելու, այլ ոչ մեռնելու ու սգի օր: Սա շատ կարևոր իմաստ ունի իր մեջ, մանավանդ, եթե հաշվի առնենք, որ այսօր էլ՝ 1915 թվականից 100 տարի անց, տեղի է ունենում արդեն սպիտակ Հայոց ցեղասպանություն, քանի որ Հայաստանն այսօր արևաքամ է լինում կորցնելով իր ամենաթանկ

արժեքը՝ հայ մարդուն: Կցանկանալի սրա վրա հրավիրել սփյուռքի մեր հայրենակիցների ուշադրությունը:

Երբ այսօր կորցնում ենք հայրենիք, իսկ հայրենիք վստահաբար կորցնելու ենք Արցախի կորստով, քանի որ Հայաստանն առանց Արցախի որպես անկախ պետություն գոյատևելու հնարավորություն չի ունենալու, ապա ի՞նչ եք կարծում, կարո՞ղ ենք լռել և դիտել, թե ինչպես է մեր աչքի առջև մեր հայրենիքը կործանվում: Միթե՞ պիտի սպասենք մինչև քարտեզի վրայից հավերժ ջնջվի ազատ անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը և թույլ տանք, որ 2115 թվականին մեր սերունդները նշեն Սպիտակ ցեղասպանության 100 ամյակը: Սփյուռք ասելով նկատի չունեմ միայն դասական սփյուռքը, այլև վերջին 25 տարիների ընթացքում Հայաստանից արտագաղթածներին: Այո, այսօր սփյուռքը կամ պետք է մասնակցի Հայաստանի ազատագրմանը կամ պետք է նախապատրաստվի նրա թաղմանը: Այսօր, ավելի քան երբևէ, Սփյուռքը կանգնած է ընտրության առջև:

Նա կամ պետք է ուժ գտնի և սթափ հայացքով նայի ազգային ազատագրական պայքարին և ֆիզիկապես միանա Հայաստանի պայքարող ժողովրդին ու ազատագրի երկիրը սեփականատիրոջ իրավունքով կամ պետք է պատրաստ լինի մոտ ժամանակներում վերջնականապես կորցնելու երկրագնդի վրա մի հողակտոր հայրենիքը: Հայրենիք, որով մենք հպարտանում ենք, որի գոյությունը մեր ինքնության պահպանման գրավականն է: Եթե Հայաստանը դառնա կորուսյալ երկիր, ապա սփյուռքահայերի՝ հաջորդ սերունդն իր հայկական ինքնության մասին կհիշի միայն իր մանկության տարիներից մնացած մեծ մամերի եփած ճաշատեսակների հիշողություններում:

*Սյուզան Սիմոնյան, «Իրավունք և աջակցություն» հիմնադրամի հիմնադիր անդամ,
«100-ամյակն առանց ռեժիմի» շարժում*

